ՏԱՐԵԳԻՐ
2014-1
NEWSLETTER

ԱՁԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ՍԻՐԻԱՀԱՅԵՐԻ ԵԿԱՄՏԱԲԵՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆԸ

Մայիսի 20-ին, ժամը 17:00 –ից 19:00-ը, Շ.Ազնավուրի անվան հրապարակում («Մոսկվա» կինոթատրոնի հարևանությամբ) Հայկական Կարմիր խաչի ընկերությունը կազմակերպել էր ցուցահանդես-տոնավա-ճառ, որտեղ ՀԿԽԸ ծրագրերի շրջանակներում գործիքներ ստացած և դրա շնորհիվ սեփական փոքր բիզնես նախաձեռնած սիրիահայերը ներկայացրեցին իրենց արտադրանքն ու հմտությունները:

Տոնավաճառի այցելուները հնարավո-ր-ություն ունեցան գնելու քաղցրավենիք, ձեռագործ աշխատանքներ և ծանոթանալու տարբեր ոլորտների մասնագետների հետ. այս նախաձեռնությունն այցելուներին անհրաժեշտ տեղեկություն կտա սիրիա-հայերի հմտությունների վերաբերյալ՝ տեսա-նելի դարձնելով դրանք, իսկ վերջիններիս համար իրենց գործունեությունն ընդլայնելու խթան կհանդիսանա:

Միջոցառումը ուղեկցվեց հայկական ժողովրդական երգ ու պարով:

FAIR-EXHIBITION TO SUPPORT INCOME-GENERATING ACTIVITIES OF SYRIAN ARMENIANS

20 May, 2014 – 17:00-19:00 PM at Sharl Aznavur Square (near “Moscow” Cinema) ARCS was organized a fair-exhibition, where Syrian Armenians, who have started their small businesses by the tools they had got in the frame of ARCS programs, presented their products and skills.

Fair visitors had the opportunity to buy sweets, handmade works and be introduced with experts in various fields. This initiative will provide visitors with necessary information regarding the skills of Syrian Armenians, making them visible, and this will expand activities of the Syrian Armenians.

The event was accompanied by Armenian folk songs and dances.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵՑ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Փետրվարի 18-ին, Հայկական Կարմիր խաչի ընկերության Գլխավոր գրասենյակում հյուրընկալվել էր Ավստրիայի Եվրոպական և միջազգային հարաբերությունների դաշնային նախարարության Արևելյան Եվրոպայի համագործակցության զարգացման ծրագրե-րի ղեկավար դոկտոր Շտեֆան Շոլցի գլխավորած պատվիրակությունը:

Պատվիրակության կազմում էին Ավստրիայի դեսպանատան Տեխնիկական համագործակցության համակարգման գրասենյակի ղեկավար Գյունտեր Զիմերը, Ավստրիայի զարգացման գործակալության միջազգային ծրագրերի ղեկավար Ռոբերտ Զեյները, Ավստրիայի զարգացման գոր-ծակալության Հարավային Կովկասի տա-րածաշրջանային գրասենյակի մասնա-գետ Նիկոլոս Գրդելիձեն և Ավստրիական Կարմիր խաչի Հարավային կովկասում պատ-վիրակության ղեկավար Սոնյա Գրեյները:

Այցի նպատակն էր ծանոթանալ Հայկական Կարմիր խաչի գործունեությանը, մասնավորապես՝ Ավստրիական զարգացման գործակալության և Ավստրիական Կարմիր խաչի աջակցությամբ իրականացվող ծրագրերին:

Ողջունելով հյուրերին՝ ՀԿԽԸ Գլխավոր քարտուղար Աննա Եղիազարյանը, ներկայացնելով Հայկական Կարմիր խաչի ընկերության պատմությունն ու գործունեության ուղղությունները, նշեց, որ 1988թ. Սպիտակի երկրաշարժից հետո ազգային ընկերությունը նոր թափով ծավալեց իր գործունեությունը, և օգնության ծրագրերից անցավ զարգացման ծրագրեր իրագործելուն և այսօր գործընկերների ծավալուն ցանկ ունի: Հին ու նոր գործընկերների թվում են նաև մյուս ազգային ընկերությունները, որոնց աջակցությամբ բազմաբնույթ ծրագրեր են իրականացվում:

Ավստրիական պատվիրակության անդամ-ներին հետաքրքրեցին փախստականների համար Հայկական Կարմիր խաչի կողմից իրականացվող ծրագրերը՝ հատկապես, որ 2013թ. հոկտեմբերից Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսա-վորմամբ և Ավստրիական Կարմիր խաչի օժանդակությամբ իրագործվում է «Աջակցություն սիրիահայերին» ծրագիրը:

ՀԿԽԸ Աղետների կառավարման և բնակչության տեղաշարժի բաժնի վարիչ Էդմոն Ազարյանը ներկայացրեց ծրագրի շրջանակներում սիրիահայերին տրամադրվող աջակցության բնույթը, շեշտելով, որ, բացի սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներից ու դեղա-միջոցներից, առանձնահատուկ ուշադրու-թյուն է դարձվում նրանց համար ինտեգրման հնարավորությունների ստեղծմանը՝ մասնա-

AUSTRIAN DELEGATION AT ARCS

On 18 February, delegation headed by Dr.Stefan Scholz, Head of Department of Programming and Planning of Development Cooperation, Federal Ministry for European and International Affairs, visited Armenian Red Cross Society Headquarters.

Dr.Gunther Zimmer, Chancellor, Head of Coordination Office for Technical Cooperation at Austrian Embassy, Robert Zeiner, Director Programmes and Projects International, Austrian Development Agency, Nikoloz Grdzelidze, Programm Officer at Regional Office for the South Caucasus, Austrian Development Agency and Sonja Greiner Head of Delegation in South Caucasus , Austrian Red Cross, were in delegation staff.

The aim of the meeting was to get acquainted with the activities of Armenian Red Cross Society, particularly with the projects implemented with the support of Austrian Development Agency and Austrian Red Cross.

Having welcomed the guests, Dr. Anna Yeghiazaryan. ARCS Secretary General presented Armenian Red Cross Society's history and activity directions, mentioning, that the National Society enlarged it's activities after Spitak earthquake in 1988, launching development projects, rather than merely providing aid. After 25 years of such an active work, now the organization has an impressive list of partners. Among them are other National Societies, who support wide range of projects implemented by Armenian Red Cross Society.

The members of Austrian delegation were mostly interested in ARCS projects for refugees, as starting from October 2013 "Relief for Syrian Armenians" project is being implemented by the finance of Austrian Development Agency and with the support of Austrian Red Cross.

Edmon Azaryan, Head of ARCS Disaster Management and Population Movement department presented the project describing the aid, that Syrian Armenians receive, emphasizing, that, except food

վորապես, սեփական փոքր բիզնես սկսելու համար գործիքների և համապատասխան խորհրդատվության տրամադրմանը: Հետա-գայում նախատեսվում է ծրագրերում ներառել նաև մի քանի շահառուների կողմից համատեղ բիզնես սկսելուն աջակցելու բաղադրիչ:

Ծրագրում ներգրավված շահառուների խնդիրներին ու կարիքներին առավել մոտիկից ծանոթանալու համար, ավստրիական պատվիրակության ներկայացուցիչները ցանկություն հայտնեցին հանդիպել նրանցից մի քանիսի հետ: Հայաստանում հաստատված չորս սիրիահայերի հետ զրույցից պարզվեց, որ նրանք, շնորհակալ լինելով արդեն տրամադրվող օգնության համար, կնախընտրեին, որ իրենց համար սեփական գործով զբաղվելու հնարավորություններ տրվեին՝ որպեսզի իրենք կարողանան արժանապատիվ կյանքով ապրել այստեղ: Ըստ այդմ, ծրագրում ներառված՝ սեփական բիզնեսին աջակցելու գաղափարը հետագայում ընդլայնելու և զարգացնելու առաջարկ արվեց:

Սիրիահայերի խնդիրների քննարկմանը հաջորդեց Ավստրիական Կարմիր խաչի և Ավստրիական զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Կառուցենք անվտանգ և կայուն համայնքներ» ծրագրի ձեռքբերումների ներկայացումը: Ծրագիրն սկսվել է 2012 թվականի դեկտեմբերի 1-ին և շարունակվելուէ մինչև 2015 թվականի դեկտեմբերի 1-ը: Ծրագրի հիմնական նպատակն է նվազեցնել գյուղական և քաղաքային համայնքների բնակչության խոցելիությունը աղետների նկատմամբ:

Ասվտրիական պատվիրակության անդամները շնորհակալություն հայտնեցին Հայկական Կարմիր խաչի ընկերությանը՝ ծրագրերի վերաբերյալ տրամադրված տեղեկատվության և շահառուների հետ շփվելու ու նրանց կարիքների հասկանալու հնարավորության համար: Նրանք վստահություն հայտնեցին, որ երկու կողմերի արդյունավետ համագործակցությունը շարունակական կլինի:

ԻՄ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

and hygiene parcels and medicine, special attention has been given to the possibilities for integration. Particularly, they have been provided with equipment to start small business and appropriate consulting. In the future, it is planned to include a component of joint business to be established by several beneficiaries.

To be more informed on the issues and needs of the beneficiaries involved in the projects, members of Austrian Delegation wished to meet some of them. After a detailed discussion with four Syrian Armenians settled in Armenia, it was found out, that, even being very grateful for the aid received, they will prefer to have an opportunity to start their own business and live with dignity.

Accordingly, it was suggested to continue working on and developing the idea of income generating in future projects for Syrian Armenians.

“Building safe and resilient communities” project achievements presentation followed the discussion. It is financed both by Austrian Development Agency and Austrian Red Cross. The project launched on 1 December, 2012 and will continue till 1 December, 2015.

The main objective of the project is to contribute towards reduced vulnerability to disasters of rural and urban population.

Austrian Delegation representatives express their gratitude to Armenian Red Cross Society for the provided information on the ongoing projects and their achievements, as well as for the opportunity to meet the beneficiaries and assessing their needs. They assured, that the effective cooperation between Austrian and Armenian sides would continue.

MY RED CROSS STORY
08.05.14

May 8 is World Red Cross Red Crescent Day. Today we celebrate the power of community and people helping people, both in the spotlight during crises and behind-the-scenes in day-to-day life.

Everyday most people are touched by the Red

Մայիսի 8-ը Կարմիր խաչի և Կարմիր մահիկի համաշխարհային օրն է: Այսօր մենք տոնում ենք Կարմիր խաչի համայնքի և մարդկանց օգնող մարդկանց ուժը՝ ինչպես ճգնաժամի ընթացքում, այնպես էլ՝ ետնաբեմում՝ առօրյա կյանքում:

Ամեն օր շատ մարդիկ շփվում են Կարմիր խաչի և Կարմիր մահիկի հետ՝ առանց նույնիսկ գիտակցելու դա: Դուք կամ որևէ մեկը, ում դուք ճանաչում եք, երբևէ արյունը հանձնել է: Ստացել է առաջին օգնության մասին տեղեկատվություն: Նրան այցելել է Կարմիր խաչի կամավոր: Գրեթե յուրաքանչյուր ոք ունի Կարմիր խաչի կամ Կարմիր մահիկի պատմություն: Ո՞րն է ձեր պատմությունը:

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ավելի քան 17 մլն կամավորներն ամբողջ աշխարհում շփվում են ընկերների, ընտանիքների և հարևանների հետ: Նրանց ծառայությունը դրական ազդեցություն ունի իրենց համայնքի յուրաքանչյուր անդամի կյանքի վրա: Նրանք գործում են այնպիսի վայրերում, ինչպիսիք են՝ հիվանդանոցները, դպրոցները, համայնքային կենտրոնները և հավաքները, լինում են մարդկանց տներում, տրամադրելով կյանք փոխող և երբեմն էլ կյանք փրկող ծառայություններ:

Կարմիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժումը տոնում է մարդասիրական գործունեության ավելի քան 150 տարին՝ տեղական և գլոբալ մակարդակներում: Մենք հավատարիմ ենք մնում ՝ խոցելի համայնքներում համապատասխան և ժամանակին մարդա-սիրական ծառայություն տրամադրելու գաղափարին՝ այժմ և ապագայում:

Ամբողջ աշխարհում, Կարմիր խաչը և Կարմիր մահիկը համայնքային ծրագրերի շրջանակներում ամեն տարի օգնում են աջակցելու 180 մլն մարդու՝ աղետներին արձագանքելով և հույս ներշնչելով:
Դուք գիտե՞ք ուրիշ մեկին, ով Կարմիր խաչի կամ Կարմիր մահիկի պատմություն ունի: Մենք կցանկանայինք իրենցն էլ լսել: Հրավիրեք նրանց կիսելու այն մեզ հետ՝ մեր Ֆեյսբուքյան էջում.

https://www.facebook.com/ArmenianRedCrossSociety:

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԿՈՒՏԻՑ ՏՈՒԺԱՄՆԵՐԻՆ

Հունվարի 17-ից 24-ը Հայկական Կարմիր խաչի ընկերությունն արդեն երկրորդ անգամ մարդասիրական օգնություն բաշխեց Արմավիրի մարզի կարկուտից առավել տուժած 15 համայնքներում: Շուրջ 1100 ընտանիք ստացան հիգիենիկ պարագաների փաթեթներ:

Մարդասիրական օգնության տրա-մադրումն այս անգամ իրականացվեց Դանիական Կարմիր խաչի ֆինանսական աջակցությամբ, որն այդ նպատակով հատկացրել էր 49 000 եվրո:

Մայիսի 12 -17-ը տեղի ունեցած աղե-տալի կարկուտը մեծ վնաս հասցրեց Արմավիրի մարզի 46 համայնքների: ՀՀ Գյուղատնտեսության նախարարության և Արմավիրի մարզի արտակարգ

Cross and Red Crescent without even realizing it. Have you or anyone you know ever donated blood? Received a tip on first aid? Been visited by a volunteer? Almost everyone has a Red Cross or Red Crescent story.

More than 17 million Red Cross and Red Crescent volunteers interact with friends, families and neighbours the world-over. Their service has a positive impact on the lives of every member of their community. They serve in places like hospitals, schools, community centres and gatherings, sometimes directly in peoples' homes – all the while providing life-changing and at times life-saving services.

The International Red Cross and Red Crescent Movement celebrates more than 150 years of humanitarian action locally and globally. We remain committed to providing relevant and timely humanitarian service to vulnerable communities now and into the future.

Around the world, the Red Cross and Red Crescent helps support 180 million people every year – in community programmes, responding to disasters and inspiring hope.

Do you know someone else who has a Red Cross or Red Crescent story? We'd love to hear theirs too. Invite them to share it with you and with us on our Facebook page:

https://www.facebook.com/ArmenianRedCrossSociety

HUMANITARIAN AID FOR AFFECTED BY HAILSTORM COMMUNITIES

On 17-24 January, already for the second time, Armenian Red Cross Society distributed humanitarian aid in 15 most affected by hail communities in Armavir region. For about 1100 families received hygiene parcels.

իրավիճակների հետևանքների գնահատման հանձնաժողովի հաշվետվությունների համաձայն՝ ամբողջովին կամ մասնակի վնասվել են 46 համայնքների գյուղա-տնտեսական դաշտերը և այգիները, տուժել է 12 800 ընտանիք, իսկ վնասի մոտավոր չափը կազմել է 25.268.56 մլրդ. ՀՀ դրամ կամ 60 մլն. ԱՄՆ դոլլար:

Աղետից հետո, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը՝ հետևելով իր մարդասիրական առաքելությանը և ելնելով Կարմիր խաչի ու Կարմիր մահիկի հիմնարար սկզբունքներից, ակտիվ գործունեություն սկսեց աղետից տուժած համայնքներին մարդասիրական օգնություն տրամադրելու համար: ՀԿԽԸ Արմավիրի մարզային մասնաճյուղի հետ միասին ստեղծված Աղետներին արձագանքման թիմն իրականացրեց արագ գնահատում, որի արդյունքում հստակեցվեցին վնասների մոտավոր չափերը, անհրաժեշտ օգնության տեսակը և առավել խոցելի խմբերը: Այդ ընթացքում կազմակերպվեցին բազմաթիվ հանդիպումներ Արմավիրի մարզային իշխանությունների, համայնքապետերի, բնակչության, ինչպես նաև՝ այլ միջազգային կառույցների հետ:

Արդյունքում, ՀԿԽԸ-ն որոշում կայացրեց դիմել Կարմիր խաչի և Կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիայի Արտակարգ իրավիճակներին արձագանքման հիմնադրամին՝ կարկուտից առավել տուժած 14 գյուղական համայնքներին, որտեղ վնասը կազմում է 100 % և բնակվում են տուժած 7131 ընտանիք, մարդասիրական օգնություն տրամադրելու համար: Հայկական Կարմիր խաչի ընկերության դիմումն ստացավ դրական արձագանք և հատկացվեց մոտ 100 մլն. ՀՀ դրամ կամ՝ 224 400 շվեյցարական ֆրանկ:

ՀԿԽԸ-ի կողմից, հաշվի առնելով միջազգային չափորոշիչները, մշակվեցին բաշխման սկզբունքները, յուրաքանչյուր փաթեթի պարունակությունը և շահառուների ընտրության սկզբունքները՝ առավել խոցելիներին աջակցելու համար:

Աղետից տուժածներին օգնության հասավ նաև Ավստրիական Կարմիր խաչը, որը, 5000 եվրոյի աջակցություն տրամադրեց Բամբակաշատ գյուղում՝ՀԿԽԸ-ի միջոցով 112 սննդային փաթեթ բաշխելու համար:

For this time Danish Red Cross allocated 49 000 Euro to make possible the distribution of humanitarian aid.

In July 1013, Armenian Red Cross Society distributed humanitarian aid in 14 the most affected by hail communities in Armavir Region. 4000 people were provides with food and hygiene kits. The content of every single package was designed to meet food and hygienic needs of families for 2-3 months.

From 12 to 17 May a disastrous hail has caused an extensive damage to 46 communities of Armavir region. According to the reports of the Ministry of Agriculture and Armavir regional Emergency Commission, agricultural fields and gardens of 46 communities were partially or fully destroyed, 12 800 families were affected and the preliminary damage was estimated at 28.268.56 bln. AMD or 60 mln. USD.

The Armenian Red Cross Society, based on its humanitarian mission and Red Cross and Red Crescent International Movement fundamental principles, has started its activities aimed at providing humanitarian assistance to affected communities. Disaster Response Team (DRT) set up jointly with Armavir regional branch has conducted Rapid Assessment and clarified approximate damages, necessary type of assistance and the most vulnerable groups. During that period, various meetings with Armavir Regional authorities, Heads of Communities, population as well as international organizations have been organized.

As a result, ARCS has made a decision to apply for IFRC DREF with the aim to provide humanitarian assistance to the most affected by hail 14 rural communities, where damage is estimated at 100 % and 7131 people out of total number of generally affected population are living,

The application of the Armenian Red Cross Society was successful and 100 mln. AMD or 224400 Swiss Franks were allocated to provide 4000 people with food and hygiene kits. The content of every single package is designed to meet food and hygienic needs of families for 3 months.

«ՕԳՆԵԼ. ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ, ԴՈՒ ԿԱՐՈՂ ԵՍ, ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ...»

Ս.թ. մարտի 14-ին ԳերմանիայիՕստֆիլդերն քաղաքում մեկնարկեց Հայկական Կարմիր խաչի ընկերության ևԳերմանական Կարմիր խաչի հետհամատեղ իրականացվող « Օգնել. Ես կարող եմ, դու կարող ես, մենք կարող ենք» ծրագրի երկրորդ փուլը, որին մասնակցում էին երկու երկրների Ազգային ընկերությունների 15 մասնակիցներից բաղկացած պատվիրակությունները: Պատվիրակության կազմում ընդգրկված էին 14-17 տարեկան երեխաներ (այդ թվում՝ հատուկ կարիքներ ունեցող):

Ծրագրի նպատակն էր տեղեկացնել հաշմանդամ մարդկանց առջև ծառացած սոցիալական, հոգեբանական և կենցաղային խնդիրների մասին, սովորեցնել օգնության ձեռք մեկնել յուրաքանչյուրին:

Գերմանիա մեկնած հայ մասնակիցները գերմանացի իրենց հասակակիցների հետ միասին անցկացրեցին մեկ շաբաթ, որի ընթացքում մասնակցեցին առաջին օգնության դասընթացների և մրցումների, ծանոթացան գերմանական և հայկական մշակույթներին, մասնակցեցին գերմանական հատուկ դպրոցների դասընթացներին: Մասնակիցների կարևոր ձեռքբերումներից էր Առաջին օգնության մրցույթում 16 հորիզոնականից 4-րդ հորիզոնական զբաղեցնելը:

Հայ և գերմանացի երեխաները հասցրեցին ընկերանալ և ստեղծել դրական մթնոլորտ:

Մարտի 20-ին տեղի ունեցավ ծրագրի գերմանացի և հայ երեխաների համատեղ ուսուցման ու ժամանցի վերաբերյալ լուսանկարների ցուցահանդես, որին հրավիրված էին մասնակցելու

Moreover, taking into consideration international standards, ARCS has developed a distribution module, content of every package and principle of selection of beneficiaries with the aim to assist the most vulnerable.

Austrian Red Cross also supported people affected by disaster, providing 5000 Euro for ARCS to distribute food parcels in Bambakashat community.

HELP? I CAN, YOU CAN, WE CAN!

The second project week of “Help? I can, you can, we can!” project was launched on March 14th, 2014 in Ostfildern, Germany. 15 young delegates from Armenia and Germany took part in the one-week project. The participants were in the age group of 14-17 (including youngsters with special needs).

One of the aims of the programme was to inform the society about the social, psychological, household issues of disabled people and teach how to help them. The Armenian delegates spent a whole week with German delegation learning First Aid, participating in competitions, they learnt a lot about the cultures and took part in classes organized at special schools in Germany.
One of the greatest achievements of the week was to win the 4th place out of 16 at First Aid competition. Armenian and German youngsters became good friends and made warm and cosy atmosphere throughout the second project week.
The exhibition which showed photos from the joint efforts, trainings, entertainment in the programme took place on the 20th of March. Pupils from special schools were invited to visit the exhibition, too. Information and interesting facts about Armenia were given during the exhibition.
On the 21st of March the youngsters said Goodbye to each other full of expectation to meet again.

The first project week of the “Help? I can, you can, we can!” programme was held in Armenia, 26-31 October, 2013.

նաև դպրոցի աշակերտներ: Ցուցահանդեսի ընթացքում իրականացվեց հյուրասիրություն, ինչպես նաև այցելուներին Հայաստանի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրվեց:

Մարտի 21-ին հայ և գերմանացի երեխաները միմյանց հրաժեշտ տվեցին՝ նորից հանդիպելու ակնկալիքով :

«Օգնել. Ես կարող եմ, դու կարող ես,մենք կարող ենք» ծրագրի առաջին փուլն իրականացվել է Հայաստանում՝ 2013թ. հոկտեմբերի 26-31-ը:

«ԺՊԻՏՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԻ» ԵՐԵԽԱՆԵՐ ՀՈՒՆԻՍԻ 1-Ը ՆՇԵՑԻՆ «ԴԱԼՄԱ ԳԱՐԴԵՆ ՄՈԼՈՒՄ»

Հունիսի 1-ին Հայկական Կարմիր խաչի ընկերությունը «Դալմա Գարդեն Մոլ» առևտրի կենտրոնի հետ համատեղ՝ Երևանի հանրակացարանաբնակ երեխաների համար կազմակերպել էր «Պարգևենք ժպիտ երեխաներին» ժամանցային միջոցառումը:

Այդ օրը, ժամը 10:30-ից 17:30-ը, 6-14 տարեկան 45 երեխաներ անցկացրեցին «Դալմա Գարդեն Մոլ» առևտրի կենտրոնում: Ժամանցային միջոցառումը մեկնարկեց առավոտյան՝ «Սինեմա Սթար» կինոդահլիճում՝ մուլտֆիլմի դիտումով: Այնուհետև առևտրի կենտրոնի տարբեր հատվածներում գործող հատուկ կահավորված տաղավարներում հանրակացարանաբնակ երեխաները մասնակցեցին տիկնիկային և կրկեսային ներկայացումների, մանկական նորաձևության ցուցադրության, շփվեցին հեքիաթների հերոսների հետ:

Մայիսի 23-ին «Դալմա Գարդեն Մոլ» առևտրի կենտրոնում տեղադրվել էր նվերների և հանգանակությունների արկղ, որտեղ մինչև հունիսի 1-ը նվերներ և գումար հավաքվեց «Ժպիտների ակումբ» ծրագրի երեխաներին համար:

ՄՈՄԱՎԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ ՁԻԱՀ-ԻՑ ՄԱՀԱՑԱԾ ՄԱՐԴԿԱՆՑ

Մայիսի 18-ին՝ ՁԻԱՀ-ից մահացած մարդկանց հիշատակի օրը, Հայկական Կարմիր խաչի ընկերությունը կազմակերպել էր մոմավառության երթ: Երթին մասնակցում էին Երիտասարդական Կարմիր խաչի 60 կամավորներ: Այն մեկնարկեց ժ.18:30-ին՝ ՀԿԽԸ կենտրոնական գրասենյակից

CHILDREN OF "SMILEY CLUB" CELEBRATED 1 JUNE IN DALMA GARDEN MALL

On 1 June, Armenian Red Cross Society in cooperation with “Dalma Garden Mall” shopping center organized “Giving smile to children” entertainment event for children living in dormitories of Yerevan.

On the day, from 10:30 to 17:30, 45 children aged 6 to14 y, spent at “Dalma Garden Mall” shopping center. Entertainment event started in the morning, by watching a cartoon in the “Cinema Star” hall. After that, in the special decorated pavilions in the different parts of the trade center, children participated in the puppet and circus performances, children’s fashion show and communicated with the heroes of the tales.

On 23 May, until 1 June, gifts and donations boxes were placed in the “Dalma Garden Mall” shopping center, to collect presents and money to support children living in dormitories engaged in the “Smiley Club” project.

INTERNATIONAL AIDS CANDLELIGHT MEMORIAL DAY

On 18 May, International AIDS Candlelight Memorial day, Armenian Red Cross Society organized a candlelight march. Red Cross Youth 60 volunteers were participating in that march. It started at 18:30 from the ARCS headquarters and proceeded to Garden at the State Conservatory named after Komitas.

At 20:00, Candlelight ceremony, accompanied by

և ավարտվեց Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի այգում:

Ժամը 20:00-ին Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիային հարող այգում կայացավ մոմավառության արարողություն՝ դասական երաժշտության ուղեկցությամբ:

Մոմավառության տաղավարից բացի միջոցառման վայրում գործում էին նաև տեղեկատվական տաղավար, որտեղ ՀԿԽԸ կամավորները լուսաբանեցին օրվա խորհուրդը՝ անցորդներին տրամադրելով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդրի վերաբերյալ նյութեր, խրախուսելով նրանց կրել կարմիր ժապավեն և մասնակցել մյուս բոլոր տաղավարներում իրականացվող միջոցառումներին, հիշատակման ծածկոցի («Քվիլթ») տաղավար, որտեղ մասնակիցները, միացնելով կտորները ստացան ծածկոց, որի յուրաքանչյուր կտոր նվիրված էր ՁԻԱՀ-ից մահացած մեկ մարդու հիշատակին, քննարկման տաղավար, որտեղ անցորդներին հնարավորություն տրվեց արտահայտել իրենց կարծիքը, ամփոփել օրվա ընթացքում ստացած տեղեկատվությունն ու տպավորությունները:

«ՆՐԱՆՔ ՍՊԱՍՈՒՄ ԵՆ ՄԵԶ...». ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

Ապրիլի 9-ին, «Մոսկվա» կինոթատրոնի սրահում տեղի ունեցավ Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից կազմակերպված լուսանկարների ցուցահանդեսի բացումը՝ «Նրանք սպասում են մեզ...» խորագրով:

Ցուցադրված լուսանկարներում ներկայացված էին հանրակացարանաբնակ միայնակ ծերերի կյանքն ու առօրյան՝ նպատակ ունենալով հանրության ուշադրությունը հրավիրել նրանց սոցիալ-տնտեսական, առողջապահական և հոգեբանական խնդիրների վրա, ինչպես նաև իրականացնել հանգանակություն՝ շուրջ 70 հանրակացարաբնակ տարեցներին աջակցություն տրամադրելու համար:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունը, 1995 թվականից ի վեր, իրականացնում է «Սոցիալ – հոգեբանական ծառայություն հանրակացարանաբնակ ծերերին» ծրագիրը: Այդ ծրագրի շրջանակներում ՀԿԽԸ երիտասարդ կամավորները պարբերաբար այցելում են հանրակացարաններում բնակվող տարեցներին, կատարում տնային փոքր գործեր, տրամադրում են սննդի փաթեթներ, կազմակերպում են նրանց ծննդյան տոները, թերթեր ու ամսագրեր են կարդում նրանց համար, ամեն ամիս անցկացնում են սոցիալական ու մշակութային միջոցառումներ:

classical music, took place there.

Besides the candlelight ceremony there were also: Informative pavilion - where ARCS volunteers were disseminating the meaning of the day, by providing passers with leaflets about HIV/AIDS issues. They were encouraging them to wear red ribbons and to participate in all events that are taking place in other pavilions, Quilt pavilion – where participants got the Quilt, by connecting the parts of the blankets, each part of which was dedicated to one AIDS victim, Discussion pavilion - where participants were given an opportunity to express their opinions, summarize the information and impressions received during the day.

PHOTO EXHIBITION "THEY ARE WAITING FOR US"

On 9 April, Armenian Red Cross Society organized a photo exhibition titled “They are waiting for us ...” at “Moscow” Cinema hall.

The photos were presenting everyday life of lonely elderly people living at dormitories in order to draw public attention to their socio-economic, health and psychological problems, as well as make fundraising to provide support of about 70 elderly beneficiaries.

Since 1995 Armenian Red Cross Society implements “Psycho-social support for elderly Refugees” program. In the frame of this program Red Cross Youth volunteers regularly visit the elderly living in dormitories, help with housework, provide food parcels, organize birthdays, read newspapers and magazines for them, organize social and cultural events every month.

Հայկական Կարմիր խաչի ընկերություն
ՀՀ, Երևան, 0015, Պարոնյան 21/1
Հեռ./ֆաքս՝ 374 10 583630,
e-mail: redcross@redcross.am, www.redcross.am.